շաւազի բերդին մօտ միանում են Փենեքի վտակին։ Օլթի վտակը Փանազկերտին մի-խառնուելուց յետոյ, ուղղւում է արեւ-մուտք եւ ընդունում է աջից՝ Նորպետ, Թա-զարդոր, Սեւբար, Աշակ[1] (Ասակ) եւ Կրան բերդի առուները. իսկ ձախ կողմից՝ Քար-նավազ, Խորմիկ, Մուկեավ, Զարզով[2], Կի-չիկ, Տիրիդեց, Կամձոր եւ Հոգամ առակ-ները, որոնք ոռոգում են համանուն գեղերը իրենց պարագաներով։

Ապա Օլթի վտակին միանում է Տավուզ-քէր (Տայոց-քար) վտակը, որ գալիս է Թուխ-եօլու, Խոզկերտ եւ Սալաջուր լեռներից, հիւսիս-հարաւ։ Տայոց-Քար վտակն ընդու-նում է ձախից Խոզկերտ, Իդլուր, Կամբ, Ինիցիտ, Որի, Մախոր, Մախուշ, Խայնիս, Կարդանազ, Որդից[3], Իթթախուր[4], Ծու-

---

1 Պարսիկները եւ Թուրանի ժողովուրդ չի ասում "Ր" բշակուներ, այլ անուանում է Ա՛շկանեան, չի ասում Ա՛ր բշակ, այլ Ա՛շակ։ Երեւի Ա՛ր բշակ անունը Օլթիյումն էլ Ա՛շակ են ասել եւ ահա մի նմուշ. մի փոյր առու Աշակ անունով իջնում է Սե-քարի բարձունքից եւ խառնում է Ճորոխին։

2 Զարզով. մենք ծանօթանում ենք Զարմդի կամ Զարմոգի մասին. հեռից մեւնոյն դաւառումն է եւ Զարզովը. միայն նրանք դեռի ձախ ափին են. իսկ սա աջ ափին։ Կան այրիք Անզով-Փագեր. Գեղ Անզով. այժմ էլ տեսանք Զարզով։ Ինչո՞ւ հողմերի պաշտամունքի գոյութիւնն են ցոյց տալիս այս զրվարը. հիւսիսային սառնամանիքը, բքաբեր հողմերը եւ հարաւային խորշակները։

3 Որդից կամ Օրդիցը, ինչպէս երեւում է եղել է ասնախմբութեան վայր ուր հաւաքւում էին եղել, միանգամայն ասնավաճառ, վրական "Օրանների" նման։

4 Իթթախուր թէ Կարսի շրջանի տարեկան ցուցա-